

ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆՈՒՆ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՅՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



**GANTEGH** BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL ՄԱՅՐ ՏԱՆԱՐ

ԿԻՐԱԿԻ 26 Ապրիլ 2020

160

DIMANCHE, 26 Avril 2020



## ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
stgregorychurch@gmail.co | www.saintgregory.ca

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԱՍ ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ  
FÊTE DE LA PREMIERE CHAPELLE,  
DIMANCHE VERT

Աստուածաշունչի Ընթերցումներ

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

9.23-31

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ

2.1-10

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

2.23-3.12

Les lectures de la Bible d'aujourd'hui :

JACQUES 3.1-12

JEAN 1.1-17

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԳԷՈՐԳ ՔՉՆՅ. ԱԲԵԱՆ

Célébrant:

RÉV. PÈRE GEVORG APYAN

Առաւօտեան ժամերգութիւն ժամը-	9:30-ին
Office Matines à	9h30
Ս. Պատարագ- ուղիղ սփռում ժամը-	10:30-ին
La Sainte Messe – En direct à	10h30
Չոգեհանգիստ - ուղիղ սփռում ժամը-	12:30-ին
Office de Requieme – En direct à	12h30
Տնօրինեաց Կարգ ժամը -	12:45
Bénédiction de Foyer -	12h45

Organist : Vahram Sargsyan  
Cœur : Emma et Zara Sargsyan

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ 2.1-10

Ուրեմն մեկդի՛ ձգելով ամեն չարություն ու ամեն խաբէություն ու կեղծաւորություն եւ նախանձ ու ամեն չարախօսություն՝ Նորածին մանուկներու պէս բանական ու անխարդախ կաթին փափաքեցէք, որպէս զի անով մեծնաք մինչեւ փրկություն, Քանզի Տէրոջը քաղցր ըլլալուն համը առիք: Մօտեցէ՛ք անոր, այն կենդանի Վեմին որ թէպէտ մարդոցմէ անարգուած է, բայց Աստուծմէն ընտրուած ու պատուական է, Դուք ալ կենդանի քարերու պէս շինուիք հոգեւոր տաճար մը, սուրբ քահանայություն մը, Յիսուս Քրիստոսին ձեռքով Աստուծոյ հաճելի հոգեւոր պատարագներ մատուցանելու: Որովհետեւ զքքին մէջ ալ կայ. «Ահա՛ Սիօնի մէջ ընտիր, պատուական անկիւնի վեմ մը կը դնեմ եւ ով որ անոր հաւատայ՝ բնաւ պիտի չամչնայ»: Ուստի ձեզի հաւատացեալներուդ պատուական է ան, բայց անհաւատներուն՝ «Այն քարը որ շինողները անարգեցին՝ անիկա անկիւնին զուխը եղաւ» Եւ «գլորման վեմ ու գայթակղութեան քար» անոնց՝ որ խօսքին չհաւատալով կը գայթակղին, որուն սահմանուած ալ էին: Բայց դուք «ընտիր ցեղ մըն էք, թագաւորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ մը, որպէս զի հռչակէք անոր առաքինությունները», որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց. Որ ատեն մը ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդն էք. որ առանց ողորմութեան էիք, բայց հիմա ողորմություն գտաք:

## ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 2.23-3.12

Երբ գատկի տօնին Երուսաղեմ էր, շատ մարդիկ անոր ըրած հրաշքները տեսնելով՝ հաւատացին անոր անուանը: Բայց ինք՝ Յիսուս իր անձը անոնց չէր վստահէր, վասն զի ինք կը ճանչնար ամեն մարդ: Պէտք չկար որ ռեւէ մէկը ուրիշ մարդու համար վկայություն տար իրեն, քանզի ինք գիտէր թէ ի՛նչ կայ մարդուն ներսիդին:

Փարիսեցիներէն մարդ մը կար Նիկողէմոս անունով, որ Հրեայ իշխան մըն էր: Ասիկա զիշերով Յիսուսին եկաւ եւ ըսաւ անոր. «Ռա բբի, գիտենք թէ դուն Աստուծմէ վարդապետ եկած ես, վասն զի մէկը չի կրնար ընել այն հրաշքները, որոնք դուն կ'ընես, եթէ Աստուած իրեն հետ չըլլայ»: Պատասխան տուաւ Յիսուս եւ ըսաւ անոր. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի. Եթէ մարդ մը նորէն չծնանի, չի կրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել»: Նիկողէմոս ըսաւ անոր. «Ի՞նչպէս կրնայ մարդ մը նորէն ծնանիլ, որ ծերացած է: Հնարաւոր ր բան է, որ նորէն իր մօրը որովայնը մտնէ ու ծնանի»: Յիսուս պատասխան տուաւ. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Եթէ մարդ մը ջուրէն ու Հոգիէն չծնանի, չի կրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել: Մարմինէն ծնածը մարմին է ու Հոգիէն ծնածը հոգի է: Դուն մի՛ զարմանար որ քեզի ըսի. 'Պէտք է ձեզի նորէն ծնանիլ': Հովը ուր որ ուզէ կը փչէ: Անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր ուրկէ՞ կու գայ, կամ ո՞ր կ'երթայ: Այսպէս ալ է այն ամէնը, որ Հոգիէն կը ծնանի»: Նիկողէմոս հարցուց անոր. «Այդ ի՞նչպէս կրնայ ըլլալ»: Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոր. «Դուն Իսրայէլի մէջ վարդապետ մըն ես եւ այս բաները չե՞ս գիտեր: Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ կը վկայենք ու մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաները ձեզի ըսի ու չէք հաւատար, ի՞նչպէս պիտի հաւատար եթէ երկնաւոր բաները ձեզի պատմեմ:

### 1 PIERRE 2.1-10

Vous étant donc dépouillés de toute malice, et de toute fraude, de dissimulations, d'envies et de toutes médisances, Désirez ardemment, comme des enfants nouvellement nés, [de vous nourrir] du lait spirituel et pur afin que vous croissiez par lui. Si toutefois vous avez goûté combien le Seigneur est bon.

Et vous approchant de lui, qui est la Pierre vive, rejetée des hommes, mais choisie de Dieu, et précieuse, Vous aussi comme des pierres vives êtes édifiés pour être une maison spirituelle, et une sainte Sacrificature, afin d'offrir des sacrifices spirituels, agréables à Dieu par Jésus-Christ.

C'est pourquoi il est dit dans l'Écriture : voici, je mets en Sion la maîtresse pierre du coin, élue et précieuse; et celui qui croira en elle, ne sera point confus.

Elle est donc précieuse pour vous qui croyez; mais par rapport aux rebelles, [il est dit] : la pierre que ceux qui bâtissaient ont rejetée est

devenue la maîtresse pierre du coin, une pierre d'achoppement, une pierre de scandale.

Lesquels heurtent contre la parole, et sont rebelles; à quoi aussi ils ont été destinés.

Mais vous êtes la race élue, la Sacrificature royale, la nation sainte, le peuple acquis, afin que vous annonciez les vertus de celui qui vous a appelés des ténèbres à sa merveilleuse lumière; [Vous] qui autrefois n'[étiez] point [son] peuple, mais qui maintenant êtes le peuple de Dieu; vous qui n'aviez point obtenu miséricorde, mais qui maintenant avez obtenu miséricorde.


#### **JEAN 2.23,3-12**

Et comme il était à Jérusalem le [jour de] la fête de Pâque, plusieurs crurent en son Nom, contemplant les miracles qu'il faisait. Mais Jésus ne se fiait point à eux, parce qu'il les connaissait tous; 25Et qu'il n'avait pas besoin que personne lui rendit témoignage d'[aucun] homme; car lui-même savait ce qui était dans l'homme.

Or il y avait un homme d'entre les Pharisiens, nommé Nicodème, qui était un des principaux d'entre les Juifs; Lequel vint de nuit à Jésus, et lui dit : Maître, nous savons que tu es un Docteur venu de Dieu : car personne ne peut faire les miracles que tu fais, si Dieu n'est avec lui. Jésus répondit, et lui dit : en vérité, en vérité je te dis : si quelqu'un n'est né de nouveau, il ne peut point voir le Royaume de Dieu.

Nicodème lui dit : comment peut naître un homme quand il est vieux? peut-il rentrer dans le sein de sa mère, et naître une seconde fois? Jésus répondit : en vérité, en vérité je te dis : si quelqu'un n'est né d'eau et d'esprit, il ne peut point entrer dans le Royaume de Dieu. Ce qui est né de la chair, est chair; et ce qui est né de l'Esprit, est esprit. Ne t'étonne pas de ce que je t'ai dit : il vous faut être nés de nouveau. Le vent souffle où il veut, et tu en entends le son; mais tu ne sais d'où il vient, ni où il va : il en est ainsi de tout homme qui est né de l'Esprit.

Nicodème répondit, et lui dit : comment se peuvent faire ces choses? Jésus répondit, et lui dit : tu es Docteur d'Israël, et tu ne connais point ces choses! En vérité, en vérité je te dis : que ce que nous savons, nous le disons; et ce que nous avons vu, nous le témoignons; mais vous ne recevez point notre témoignage. Si je vous ai dit ces choses terrestres, et vous ne les croyez point, comment croirez-vous si je vous dis des choses célestes?



## Հոգևոր Հովիւի Պատգամը

### ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒԻ ՊԱՏԳԱՄԸ ԿԱՆԱՉ ԿԱՄ ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻ

Աւետարանին մէջ կը կարդանք, թէ Առաքեալներ Յիսուսի Երկինք Համբարձումէն ետք, կը հաւաքուէին Վերնատան մէջ եւ կը յիշէին իրենց Մեծ Վարդապետին Վերջին Ընթրիքին ժամանակ տուած պատգամները: Կ'օրհնէին հացն ու գինին, միասին կ'աղօթէին ու կը ճաշէին: Այս բոլորը անոնք կը կատարէին միասնաբար եւ ունէ մէկը սեփականութիւն չունէր: Մէկը բոլորին եւ բոլորը՝ մէկին համար էին: Ահա այսպիսի հաւաքոյթներու առաջին աղօթավայրն է, որ կը կոչուի Աշխարհամատուռ, այսինքն՝ Աշխարհի առաջին Մատուռը կամ առաջին Եկեղեցին:



Այսօրուան տօնը կը կոչուի նաեւ Կանաչ Կիրակի: Դժբախտաբար կանաչ բառին ճշգրիտ իմաստը մեզի ծանօթ չէ: Ան նոր իմաստ մը կրնայ ստանալ, եթէ նմանութիւն տեսնենք բնութեան եւ առաջին Եկեղեցիին միջեւ: Ան բնութեան մէջ ծաղկող, աճող կեանքն է, որ կենդանութիւն եւ թարմութիւն կու տայ աշխարհին ու մարդկութեան: Աշխարհի առաջին Մատուռն ալ իբրեւ Յիսուսի ցանած սերմին կանաչ ծիլերը, աճեցաւ, բազմացաւ ու դարձաւ աշխարհին մէջ տարածուած առաջին Եկեղեցին:

Ինչպէս ըսինք կանաչ բառը կը կապուի բնութեան զարթօնքին հետ: Տաք երկիրներու մէջ, ուր ձմեռը կարճ կ'ըլլայ, ձիւն չի տեղար, այնտեղ ապրողները շատ չեն զգար զարնան հրաշալիքը, տեսակ-տեսակ ծաղիկներու բացուիլն ու կանաչութեան արթնացումը: Կը յիշեմ Հայաստանի ձիւնոտ ձմեռէն ետք, մենք կ'երազէինք, թէ ե ըբ պիտի գայ գարունը, որ տեսնենք ձնածաղիկներու ու զանազան ծաղիկներու

բացուիլը եւ ծառերու ծաղկումը: Գարունը հրաշք է, կանաչութիւն՝ կեանք :

Եթէ գարնան կանաչութիւնը նոր զարթոնք կանաչացնէ մեր մէջ, պատկերացուցէք, եթէ ամէն մէկս մեր մէջ զգանք մեր հոգիին զարթոնքը, հաւատքի զօրացումը, սիրոյ զգացումին առատութիւնը, այն սիրոյ, որ Յիսուս կտակ թողեց մեզի երկու հազար տարիներ առաջ: Այս սիրոյ աղբիւրը եղած է այսօր ու պիտի մնայ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Ձարմանալիօրէն երբեմն կը լսեմ, թէ ոմանք կը փորձեն մեր հաւատացեալ հայրերիներուն ուշադրութիւնը շեղել օտար եկեղեցիներու եւ կղերականներու գովքը ընելով. «Գիտէք թէ ի՞նչ գեղեցիկ է այս եկեղեցին կամ այն եկեղեցին»: «Անոնց կղերականը այնպիսի քարոզ կը խօսի, որ հոգիդ կը հանդարտի», «Այնտեղ շատ աւելի լաւ է, քան այստեղ» եւ այլն:

Այսպէս արտայայտողներուն ես կ'ուզեմ յիշեցնել 5-րդ դարու մեր նշանաւոր Հայրապետներէն՝ Ս. Մահակ Պարթեւ Կաթողիկոսին այս երբեք չհինցող խօսքը.- Երբ նախարարները յոգնած, ձանձրացած եւ յուսահատ ժամանակի հայոց թագաւորին վարք ու բարքէն, ցանկութիւն ունեցած էին անոր փոխարէն պարսիկ մէկը բերել եւ դիմած էին այս հարցով Վեհափառ Հայրապետին՝ անոր օգնութիւնը խնդրելով: Հայրապետը նախ փորձած էր իշխանները ետ պահել իրենց այս սխալ որոշումէն, ապա վրդոված ըսած էր. «Մեր հիւանդ ոչխարը աւելի նախընտրելի է, քան ուրիշին առողջ գայլը», հասկցնելով իշխաններուն, որ ուրիշը, օտարը մեր լաւութիւնը չ'ուզեր, այլ պիտի փորձէ մեզ օգտագործել ի շահ իր պետութեան ու ժողովուրդին: Ի՞նչ հրաշալի, ուսանելի եւ իմաստուն խրատ է այս:

Մի ծուլանաք, եկէք ձեր Տունը, Աստուծոյ Տունը, բոլորիս Տունը եւ թերահաւատ մի ըլլաք, այլ ոգեւորուած, լիցքաւորուած, շարունակեցէք ձեր կեանքը: Ձեզմէ ամէն մէկը թող իր հոգեկան աշխարհը դարձնէ մէկ եկեղեցի, հաւատքի Եկեղեցի, որպէսզի ո՛չ մէկ օտար ազդեցութիւն, ո՛չ մէկ օտար աղանդ չկարենայ կործանել մեր տան միասնութիւնն ու խաղաղութիւնը: Յիսուս իր ժամանակին զգուշացուց Իրեն հետեւողներուն. «Զգո՛յշ եղէք սուտ մարգարէներէն, որոնք մօտ են ձեզի ոչխարներու զգեստներով, բայց ներսէն յափշտակող գայլեր են:

Իրենց գործերէն կը ճանչնանք անոնց (Մատթ. 7:15) եւ կը շարունակէ. «Ով որ կը լսէ իմ այս խօսքերս եւ կը կատարէ զանոնք, կը նմանի իմաստուն մարդու մը, որ իր տունը շինեց ժայռին վրայ անձրեւները թափուեցան, եւ գետերը յորդեցան, հողմերը փչեցին եւ զարկին այդ տունին, բայց չկործանեցաւ, որովհետեւ ժայռին վրայ հաստատուած էր: Իսկ ով որ լսէ իմ այս խօսքերս եւ զանոնք չի կատարէ, կը նմանի յիմար մարդու մը, որ իր տունը շինեց աւազին վրայ անձրեւները թափուեցան,

եւ գետերը բարձրացան, հողմերը փչեցին եւ զարկին այդ տունին եւ ան ինկաւ, եւ անոր կործանումը շատ մեծ եղաւ» (Մատթ. 7:24-28):

Այդ ժայռին վրայ կառուցուած Տունը Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին է: Կարդացէ՛ք մեր Եկեղեցոյ պատմութիւնը եւ կը տեսնէք, թէ ան ինչպիսի սիրով, ջերմութեամբ ու հաւատքով պաշտպանած է իր զաւակները օտար քամիներէն մինչեւ այսօր: Գրկախառնուեցէք անոր հետ եւ կը զգաք, թէ դուք ինչքան ուժեղ էք:

Այս գեղեցիկ տօնական օրը, իմ աղօթքս ուղղուած է Աստուծոյ, որ Ան Իր Ամենագոր Աջով պահէ պահպանէ մեր ժողովուրդին բոլոր զաւակները ամենուր ամէն տեսակ փորձանքներէն ու դժբախտութիւններէն: Թող Աստուծոյ սէրն ու խաղաղութիւնը միշտ թագաւորեն մեր բոլորին սիրտերուն մէջ: Ամէն:

Օրհնութեամբ՝

Տ. Դաւիթ քահանայ Սարգսբեան

Հոգեւոր հովիւ

## **Sermon Spirituel du Pasteur Fête de la Première Chapelle – Dimanche vert**

Dans les Évangiles, nous lisons qu'après l'Ascension de Jésus au ciel, les apôtres se sont réunis dans la Vernad et se sont souvenus des messages qu'ils avaient transmis à leur grand maître lors de la dernière Cène. Ils ont béni le pain et le vin, prié ensemble et mangé. Ils ont fait tout cela ensemble, et personne ne le possédait. L'un était pour tout le monde et tous pour un. C'est le premier lieu de culte pour de tels rassemblements, qui s'appelle Ashkharamatur, c'est-à-dire la première chapelle ou la première église du monde.



La fête d'aujourd'hui s'appelle également le dimanche vert. Malheureusement, la signification exacte du mot vert nous est inconnue. Elle peut avoir une nouvelle signification si nous regardons les similitudes entre la nature et la première Église. C'est la vie florissante et croissante dans la nature qui donne vie et fraîcheur au monde et à l'humanité. La première chapelle du monde, les pousses vertes de la semence semée par Jésus, a grandi, s'est multipliée et est devenue la première Église au monde :

Comme nous l'avons dit, le mot vert est associé à l'éveil de la nature. Dans les pays chauds, où l'hiver est court et où il n'y a pas de neige, ceux qui y vivent



ne ressentiront pas l'émerveillement du printemps, la variété des fleurs et le réveil de la verdure. Je me souviens qu'après l'hiver neigeux en Arménie, nous avons rêvé du printemps pour voir l'ouverture des perce-neige et des fleurs divers et la floraison des arbres. Le printemps est un miracle, la verdure est la vie.

Si le vert du printemps apporte en nous un nouvel éveil, imaginez si chacun de nous a ressenti l'éveil de nos âmes, le renforcement de la foi, l'abondance du sentiment d'amour, l'amour que Jésus nous a laissé il y a deux mille ans. La source de cet amour est aujourd'hui et restera notre Sainte Église apostolique arménienne.

Étonnamment, j'entends parfois des gens essayer de distraire nos fidèles Arméniens en louant les églises et le clergé étrangers. " Savez-vous à quel point cette église est belle? " "Leur clergé prononce un tel sermon que cela calme votre âme", "C'est bien mieux ici qu'ici", et ainsi de suite.

A ceux qui s'expriment ainsi, je voudrais rappeler l'un de nos célèbres patriarches du Ve siècle, Saint Le catholicos Sahak Partev a déclaré: "Lorsque les ministres étaient fatigués, ennuyés et désespérés du comportement et des manières du roi arménien de l'époque, ils voulaient amener un homme persan à sa place et ont demandé à Sa Sainteté de l'aider dans cette affaire." Le patriarche a d'abord tenté de dissuader les princes de cette mauvaise décision, puis a déclaré avec indignation: "Nos moutons malades sont préférables au loup sain d'un autre", a-t-il dit, expliquant aux princes que l'autre, l'étranger, ne voulait pas de notre bien, mais essaierait de nous utiliser au profit de son état et de son peuple. Quel conseil merveilleux, instructif et sage est-ce?

Ne soyez pas paresseux, venez dans votre maison, la maison de Dieu, la maison de nous tous, et ne soyez pas sceptiques, mais excités, chargés, continuez votre vie. Que chacun de vous fasse de son monde spirituel une église, une église de foi, afin qu'aucune influence étrangère, aucune secte étrangère ne puisse détruire l'unité et la paix de notre foyer. Jésus a averti ses disciples en son temps "Méfiez-vous des faux prophètes, qui sont près de vous dans des vêtements de brebis, mais sont des loups volant de l'intérieur. "

Nous les connaissons par leurs œuvres (Matthieu. 7:15) et continuons: "Celui qui entend mes paroles et les fait est comme un sage qui a construit sa maison. Les pluies sont tombés sur le rocher, et les rivières ont débordé, les vents ont soufflé et ont frappé cette maison, mais il n'a pas péri parce que le rocher a été créé. Et quiconque écoute ces paroles que je mets, et ne les fait pas, est comme un homme insensé qui a bâti sa maison et sa destruction était grande. " (Matthieu 7 : 24-28).

La maison construite sur ce rocher est notre Sainte Église arménienne apostolique. Lisez l'histoire de notre Église et voyez à quel point elle a protégé

ses enfants des vents étrangers avec amour, chaleur et fidélité. Embrasse-la et ressens ta force.

En ce beau jour de fête, ma prière est à Dieu de le garder de sa main droite toute-puissante, pour protéger tous les enfants de notre peuple de toutes sortes de troubles et de malheurs partout. Que l'amour et la paix de Dieu règnent toujours dans le cœur de nous tous. Amen :

Avec la bénédiction,  
Rév. Père David Margarian, Prêtre Paroissial

## **HOLIDAYS**

### **SUNDAY OF THE WORLD CHURCH (GREEN SUNDAY)**



The second Sunday following the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ is the Sunday of the World Church. It commemorates the first Church of Jerusalem, established by Christ. On the first day of the Jewish festival of Passover, Jesus instructs two of the Apostles, Peter and John, to go into Jerusalem and meet a man, who would direct them to a house where Christ and His Apostles could celebrate the Passover Feast. Peter and John are led to the “Upper Room” of a house, where they make the necessary preparations for the meal. Later that evening Christ and the Twelve Apostles sit together to eat supper. Christ speaks to them and says, “I have desired to eat this Passover with you before I suffer: For I say unto you, I will not any more eat thereof, until it be fulfilled in the Kingdom of God. And He took the cup, and gave thanks, and said, "Take this, and divide it among yourselves: For I say unto you, I will not drink of the fruit of the vine, until the kingdom of God shall come.” And he took bread, and gave thanks, and broke it, and gave unto them, saying, “This is my body which is given for you: this do in remembrance of me.” Likewise, also the cup after supper, saying, “This cup is the new testament in my blood, which is shed for you.” (Lk 22:15-20) This “Last Supper” was the event where Jesus Christ established the Sacrament of Holy Communion, which we celebrate every Sunday during the Divine Liturgy in Armenian Churches throughout the world. The Upper Room in Jerusalem is considered to be the first Church, as founded by Christ. The Sunday of the World Church is also called “Green” Sunday, which is the popular name of the feast and is linked with the awakening of nature in the springtime.



## ԿԱՐԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտեի՞ք թե,-

- **Կրնա՞մ հաղորդուիլ առանց մեղքերու խոստովանութեան, եթէ նոյնիսկ շատ կը ցանկամ:**

Ո՛չ, քանզի առանց մեղքերու անհատական կամ ընդհանրական խոստովանութեան, կարելի չէ մօտենալ Ս. Հաղորդութեան: Հոգեւոր կեանքին մէջ զօրանալու համար նախ անհրաժեշտ է մաքրուիլ մեղքերէն եւ ապա նոր ճաշակել Տիրոջ Մարմինն ու Արիւնը: Այլապէս այդ Ս. Հաղորդութիւնը մեզի համար կը դառնայ ոչ թէ օրհնութիւն, այլ դատապարտութիւն: Ուստի հոգեւոր մաքրութեամբ, ամենայն լրջութեամբ, պատասխանատուութեամբ եւ հաւատքով պէտք է Ս. Հաղորդութիւն ստանալ: Յիշենք նաեւ Ս. Պօղոս առաքեալի խրատը այս մասին (տե՛ս Ա Կորնթ. 11.27-32):

- **Հիւանդները եւ յիները կրնա՞ն Ս. Հաղորդութենէն առաջ բան մը ուտել:**

Այո՛, եթէ ուտելը իսկապէս անհրաժեշտութիւն է եւ այլ կերպ հնարաւոր չէ: Օր.՝ կան հիւանդներ, որոնք բժիշկի կողմէ սահմանուած յատուկ ժամերու պէտք է դեղ առնեն, բայց անոնցմէ առաջ նաեւ բան մը պէտք է ուտեն: Կամ՝ յղի կիներ պարտաւոր են կանոնաւոր կերպով սնուիլ եւ չեն կրնար երկար ժամանակ անօթի մնալ, որպէսզի չվնասեն պտուղին եւ առողջ զուակ ունենան: Ուստի այս պարագաներուն նմանատիպ մարդոց Եկղեցին չի զրկեր Ս. Հաղորդութենէն եւ կը թոյլատրէ հաղորդուիլ:



## **ՇԱԲԹՈՒՄԸ ԱՂՕԹԸՐԸ** **Ազգիս Հայրապետի աղօթքը**

### **ԱՂՕԹԸ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՅՊԱՆՈՒԹԵԱՆ**

«Բարերար եւ բազումողորմ Աստուած, ընդունե մեր երկրպագութիւնը, եւ լսե մեր աղաչանքները, որովհետեւ Զեզ ապաւինելով կ'ակնկալենք առատ ողորմութիւնդ եւ անսպառ գթութիւնդ: Անսալով մեր աղաչանքներուն՝ բժշկութիւն պարգեւէ բոլոր հիւանդներուն, վարակեւ ապաքինուող բոլոր անձանց:

Հեռու վանե վախն ու տազնապը անոնցմէ,  
որոնք բուժման ընթացքին եւ կամ  
մեկուսացումին մէջ են:

Պահե ու պահպանե անոց ընտանիքներն ու բարեկամները եւ խաղաղութիւն պարգեւէ անոց բոլոր սիրելիներուն: Զո անչափ բարերար կամքով օրհնե եւ զօրութիւն պարգեւէ զօր ու գիշեր իրենց անձնուէր ծառայութիւնը մատուցող մեր բժիշկներուն եւ բուժաշխատողներուն, որոնք անձնուրաց ջանքեր կը ներդնեն հիւանդներուն ապաքինելու իրենց ծառայութեան մէջ: Պահե եւ պահպանե մեր ժողովուրդին եւ համայն աշխարհին, օգնական լեր եւ քո աստուածային իմաստութիւնը պարգեւէ հայրենի մեր իշխանութիւններուն եւ աշխարհի բոլոր առաջնորդներուն, որպէսզի համավարակի դէմ պայքարի ձեռնարկումները պսակուին յաջողութեամբ, եւ Զու առատ շնորհովդ ու ողորմածութեամբ կարողանանք յաղթահարելու

Նաեւ այս փորձութիւնը:

Արդ, ողորմած եւ մարդասէր Աստուած, թողութիւն տուր մեր մեղքերուն եւ ազատե հիւանդութիւններէն, որպէսզի մենք ամենքս գոհութեամբ ու երախտագիտութեամբ փառաւորենք ու երկրպագենք Ամենասուրբ Երրորդութեանդ, յալիտեանս յալիտենից. Ամեն»:

### **LA PRIÈRE DE GUÉRISON ET DE PROTECTION**

« Dieu bon et plein de miséricorde, accepte nos prosternations et entend nos suppliques car en nous confiant à Toi nous espérons Ta miséricorde et Ton infinie pitié.

Reçois nos supplications et guéris tous les malades et tous ceux qui sont sur la voie de la guérison.

Éloigne de ceux qui sont malades ou isolés la peur et l'angoisse.

Garde et protège leurs familles et leurs amis, et accorde la paix à tous ceux qui leur sont chers.

Par Ta volonté infinie béni et reconforte nos médecins qui œuvrent

Garde et protège notre peuple et le monde entier, soutiens et accorde Ta sagesse aux autorités de notre pays ainsi qu'aux responsables politiques du monde entier afin que toutes les actions pour combattre le virus soient couronnées de succès et que par Ton abondante grâce et Ta miséricorde nous puissions également surmonter cette Épreuve.

Aussi, Dieu miséricordieux et qui aimes les hommes, absous nos péchés et sauve-nous de toutes les maladies afin que tous ensemble, dans une même action de grâce et reconnaissants, nous nous prosternions pour glorifier Ta très sainte Trinité, dans les éternités des éternités. Amen ».

**ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ**

**SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ  
ԿԻՐԱԿԻ, 26 Ապրիլ 2020**



Պրն. Արման Տեմիրտովենի եւ Պրն. Տեյվիտ Պենեթի,  
Տ. եւ Տիկ. Սեւան եւ Չերիլ Տեմիրտովենի,  
Տ. եւ Տիկ. Սուրատ եւ Անահիտ Տեմիրտովենի  
եւ Ալենի,  
Տ. եւ Տիկ Կարէն եւ Բէյճ Տեմիրտովենի  
եւ Ճէք-Սեւանի,  
Տ. եւ Տիկ. Քայլ եւ Հանա Պաթիմօրի,  
Պրն. Քրիսթօֆըր Տեմիրտովենի,  
Տ. եւ Տիկ. Գեորգ Բալազեանի (Աւստրալիա),  
Տ. եւ Տիկ. Կարպիս Բալազեանի (Թուրքիա),  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն  
պիտիկատարուի իրենց սիրեցեալ Հօր,  
աներիօր, մեծ հօր, մեծ մեծ հօր, եղբօր, տաքրոջ  
եւ հօրեղբօր

**ՆՈՒՐՀԱՆ ՏԷՄԻՐՏԵՕՎԵՆԻ  
(NURHAN DEMIRDOGEN)**

Մահուան 40-ին առիթով:



Տիկ. Սրբուհի Եարրճըի,  
Պրն. Օնիկ Լէյլէքօղլուի,  
Պրն. Կարէն Եարրճըիի,  
Տ. եւ Տիկ. Արէք եւ Մաքսիմ Եարրճըի,  
Տ. եւ Տիկ. Նազարէթ եւ Գարին Աղպապեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

իբեճ սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝  
**ԳԵՂՈՒՀԻ ԼԷՅԼԵՔՕՂԼՈՒԻ**  
**(KEGHUHI LEYLEKOGLU)**

Մահուան 40-ին առիթով:



**ՉՈԳԵՅԱԼԳԱՏԵԱՆ ԱՐՕԹԸ**

Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ,  
գթա քո արարչական սիրովդ  
ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց:  
Յիշեալ յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ:  
Արա արժանի ողորմութեան քաւութեան  
եւ թողութեան մեղաց:  
Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո  
յաջակողմեան դասուն:  
Չի դու ես ՏԵՐ եւ արարիչ ամենեցուն.  
դատաւոր կենդանեաց եւ մեռելոց:  
Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ.  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանց յաւիտենից, ամէն:

**ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՅ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՅԻ**



# ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

## CHURCH:

.IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:  
THE LATE VIVIAN DEVLETIAN-IBISHIAN:

Mr. Sako Mekhgeavakian, Miss Hermine Mekhgeavakian, Mr. & Mrs.  
Nazareth Mekhgeavakian & Family, Dr. Arto Demirjian \$50.

THE LATE HARUTYUN BALIAN:

Dr. Arto Demirjian \$50.

THE LATE AGOP BEL:

Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy, Mr. & Mrs. Sake & Meyri & Ohannes  
Unlusoy \$100.

THE LATE SYLVA MEKHGEAVAKIAN:

Mrs. Houry Hakimian \$100, Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy \$50.

EASTER MERELTZ HOKEHANKISD

REQUIEM SERVICES:

THE LATE MEREMETCI FAMILY:

Mrs. Perkrui Meremetci \$50.

THE LATE KEGHUHI LEYLEKOGLU:

Ms. Serpuhi Yarici & Mr. Onnik Leylekoglu \$200.

YOUGHAKIN EASTER:

Mrs. Chake Gunjian \$500, Mr. & Mrs. Edouard Dermardiros \$200, Mr. &  
Mrs. Diran & Vilma Attarmigiroglu, Mr. Jack Hagop Berberian, Mr. & Mrs.  
Wanis & Lidia Basmadjian, Mr. & Mrs. Manouk & Siran Jamgotchian, Mr. &  
Mrs. Onnik & Marie Pilafian, Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen, Mr.  
Wahan Basmadjian, Mr. Agop Sirinyan \$100, Mr. & Mrs. Vahan & Anoush  
Sekeryan \$80, Mr. Jirayr Gazeryan \$60, Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy,  
Mr. Vahe Keresteciyan, Mrs. Elmas Kisa, Mr. Boghos Sahaguian, Ms. Takouhi  
Aghazarian, Mr. Mardiros Baygin, Mr. & Mrs. Garo & Nuvart Paragamyian,  
Mr. & Mrs. Noubar & Giselle Semerjian, Mrs. Anna & Mrs. Daisy Saakian  
\$50, Mr. & Mrs. Mihran & Marguerite Meneshian \$40, Mrs. Alis Afker, Mrs.  
Shoushan Arisyan, \$30, Mr. & Mrs. Martin Maraslyan, Mrs. Hermine Gorlon  
\$25.

## ՏՆՕՐՀՆԷՔ – HOME BLESSING



One of the holy traditions on the Armenian Orthodox Church is the Home Blessing Service. According to St. Gregory of Tatev, it was established by Our Saviour and Lord Jesus Christ, when after His resurrection He entered the upper room and blessed the disciples.

**That Sunday evening the disciples were meeting behind locked doors because they were afraid of the Jewish leaders. Suddenly, Jesus came and stood among them and said, "Peace be with you!" (John 20:19)**

The apostles and their disciples were given the responsibility to go out and preach the good news to all the homes they were welcomed into. This tradition is kept in the Armenian Church with the sacrament of a Home Blessing. Traditionally, a priest would visit the homes of his parishioners during the Christmas and Easter seasons to spread the good news of Christ's birth and resurrection.

At a Home Blessing, a hymn is sung, and a Gospel reading is read after which the priest blesses bread, salt and water. These three items are blessed because they are not only required for life, but Christ refers to them specifically in His teachings. Christ refers to himself as the "bread of life" (John 6:35) and "spring of life" (John 4:14). Without these two physical items, food and water, we cannot live. Likewise, without Christ, we cannot live spiritually either. He also reminds us that we are the "salt of the earth" (Matthew 5:13) and as such, we must give flavor to the rest of the world.



**ՄՐՏԱԲՈՒԽ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ  
Ի ՆՊԱՍՏ  
ՁԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՅԾԱՌՈՒԹԵԱՆ**

Գիտակցելով այսօրեայ դժուարին կացութիւնը, համեստօրէն կը խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, կատարել իրենց Չատկուայ իղազինի, հոգեհանգիստներու, աղօթքի խնդրանքներու, խորանի ծաղիկներու կամ որեւէ սրտաբուխ նուիրատուութիւն ի նպաստ Ս. Եկեղեցւոյ առաքելութեան, որ կարելի է կատարել առցանց այցելելով Եկեղեցւոյ կայքէջը:  
Website - [Saintgregory.ca](http://Saintgregory.ca)



Կամ հեռաձայնելով Եկեղեցւոյ գրասենեակ՝  
(514)279-3066  
Շնորհակալութիւն

**YOUR HEARTFELT DONATIONS  
FOR THE SUPPORT OF OUR CHURCH:**

Concerning the difficulties that we are facing to those days; we humbly ask our parishioners to remember St. Gregory the Illuminator Armenian Cathedral for the glory of our Church.

Your donations can also be made through the Church website – [saintgregory.ca](http://saintgregory.ca)

by: 

Tel: (514)279-3066

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ  
ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲՈՒԿԱՆ**

**Ապրիլ – Avril**

27, Երկուշաբթի – ԺԶ ՕՐ ՅԻՆԱՆՑ  
Lundi 27 – 16ème jour de la période des 50 jours  
qui vont jusqa à la Pentecôte

28, Երեքշաբթի – ԺԷ ՕՐ ՅԻՆԱՆՑ  
Mardi 28 – 17ème jour

29, Չորեքշաբթի – ԺԸ ՕՐ ՅԻՆԱՆՑ  
Mercredi 29 - 18ème jour

30, Հինգշաբթի – ԺԹ ՕՐ ՅԻՆԱՆՑ  
Jeudi 30 – 19ème jour

**Մայիս – Mai**

1, Ուրբաթ – Ի ՕՐ ՅԻՆԱՆՑ  
Vendredi 1 – 20ème jour

2, Շաբաթ- ԻԱ ՕՐ ՅԻՆԱՆՑ  
Samedi 2 – 21ème jour

**ՇԱԲՈՒԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ**

Եթէ հիասթափուած էք մէկէ մը, մի՛ պատժէք միւսները: Մարդիկ տարբեր են: Մի՛ կորսնցնէք վստահելու, հաւատալու եւ սիրելու ունակութիւնը:

Մայր Թերեզա

«Տէրը իր իշխանական կահոյքը դնելով երկինքին մէջ, ամբողջ տիեզերքը կը կառավարէ բնական եւ յաւիտենական օրէնքներով: Անոնք անքակտելի եւ անփոփոխ են, ոչ մէկը չի կրնար քանդել կամ փոխել նման աշխարհական կանոններու, որոնք մէկ ձեռքով կը գրուին, իսկ միւսով՝ կը ջնջուին»:

Խրիմեան Հայրիկ



ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

En direct

Live



**Շաբաթ, 25 Ապրիլ 2020**

Երեկոյեան ժամը՝ 5-ին  
Ժամերգութիւն  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանսիտ  
Մայր Տաճարին մէջ:



Ուղիղ հեռարձակում – Facebook Live

**Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

**Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**  
**LA SAINTE MESS ET L'OFFICE DE REQUIEME**

Ուղիղ հեռարձակում - Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Կիրակի, 26 Ապրիլ 2020**

**Ս. Պատարագ առաւօտեան ժամը 10:30-ին**

**Dimanche, le 26 Avril 2020 - La Sainte Messe à 10:30**

**Հոգեհանգստեան Պաշտօն կէսօրին - Office de Requieme à Midi**

Թէեւ ներկայ իրավիճակը անորոշութեամբ կը շարունակուի, սակայն մեր Եկեղեցւոյ Ս. Եւ Ամմահ Պատարագը, հոգեհանգստեան պաշտօններն ու աղօթքները առցանց կերպով կը շարունակուին մատուցուիլ:

Անոնք որոնք կը փափաքին դիմել հոգեհանգստեան պաշտօններու, աղօթքի խնդրանքներու իրենց հարազատներու ապաքինման համար, կընան հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066 թիվին, մենք սիրով կ'ընդառաջենք Ձեր խնդրանքներուն միաժամանակ հաղորդակից դարձնելով Ձեզի Մեր սրբազան արարողութիւններուն:

Bien que la situation actuelle reste incertaine, la liturgie de la Sainte et Immortelle, les services de requiem et les prières continuent d'être offerts en ligne. Ceux qui souhaitent demander un service de requiem et des prières pour le rétablissement de leurs proches, veuillez appeler le Bureau de l'Église au (514)279-3066), nous serons heureux de répondre à vos demandes et de vous faire participer à nos rites sacrés.

**Nous acceptons également vos dons en ligne par**



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

Ս. ԵՒ ԱՆՄԱՅ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՅԱՆԳԻՍ  
LA SAINTE MESS ET L'OFFICE DE REQUIEME

Ուղիղ հեռարձակում – Facebook Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Կիրակի, 26 Ապրիլ 2020  
ՏՆՕՐՀՆԷՔԻ ԿԱՐԳ



Յաւարտ Ս. Պատարագի եւ հոգեհանգստեան  
պիտի կատարուի Ս. Յարութեան Տնօրհնէքի Կարգ:  
Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին ունենալ  
օրհնուած հացէն, ջուրէն եւ աղէն, կը խնդրենք հեռաձայնել  
Եկեղեցւոյ գրասենեակ:

Նոյնպէս, ֆիզիքական անկարողութիւն, երթելեկութեան  
դժուարութիւն ունեցող հաւատացեալներ, դարձեալ կրնան  
հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ պէտք եղած  
կարգադրութիւնները կատարելու համար:

Հեռ. (514) 279-3066



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԱՌԱԶՆՈՐԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

### ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,  
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,  
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել  
Bernard փողոցի վրայ գտնուող  
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի  
կայանատեղիին (parking) մէջ,  
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.հ. ժամը 3:



### PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

**Adress** : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2